Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Քննաթերթ-Պատասխաններ

Հարցեր 1-25	*50 միավոր*
Խնդիր 1 *Բաժին Ա.* *Բաժին Բ*	 *16 միավոր* *6 միավոր*
Խնդիր 2 *Բաժին Ա* *Բաժին Բ*	 *10 միավոր* *5 միավոր*
Խնդիր 3	*8 միավոր*
Խնդիր 4	*5 միավոր*
Ընդամենը	*100 միավոր*

Հուլիս, 2025թ.

Հարցեր 1-25 Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1	Ա	Նոյեմբեր-ապրիլ համար. ` (1500000/12 * 6 * 2/6) + մայիս-հոկտեմբեր՝ (1500000/12 * 6 * 3/7) =571428
2	Դ	(106900000-(105250000-19000000) -((105250000*5%) * 2+ (105250000*5% /12))=31613542
3	Դ	
4	Դ	
5	Ա	385,25/1,15+98-116=317
6	Բ	10.000.000, քանի որ այն է հանդիսանում նվազագույնը վաճառքի զուտ արժեք հանած իրացման ծախսերի ակնկալվող գումար
7	Բ	
8	Ա	
9	Գ	
10	Ա	
11	Ա	104մլն -41,6մլն ((104*20%)*2 / 2023-24թ մաշվածք/) -25մլն (կուտակված մաշվածք առ 31.12.23թ) + 26մլն (նոր ձեռք բերված հիմն.միջ սկզբնական արժեք/20+1,5+0,5+4/)-2,6մլն (26*20% /2 (նոր ձեռք բերված հիմն.միջ մաշվածք 2024թ հուլիս-դեկտեմբեր)=60,8
12	Ա	
13	Դ	
14	Դ	
15	Բ	
16	Ա	15,000-50,000+20,000=15,000 արտահոսք
17	Դ	
18	Դ	
19	Դ	
20	Գ	
21	Ա	190000-680000 (850000*80%)+650000-100000=60000 60000-15000- 22500 (45000*50%)=22500վնաս
22	Գ	158,5=110+280+15-5-2-240-1+1,5
23	Գ	1.5ԸՊ – ԸՊ=150,000 ԸՊ=150,000/0.5=300,000
24	Բ	Եկամուտ=((20800- ԱԱՀ գումար (3466.67)) + (12000/12*4 - ԱԱՀ գումար (666.67) =20666,66 Կանխավճարը =32800/12*2= 5466,67
25	Դ	

Խնդիր 1 /Հաշվապահական ձևակերպումներ, ֆինանսական հաշվետվություններ/ Բաժին Ա)

Պարտադիր չէ, որ հաշիվների համարները և անունները համապատասխանեն օրինակելի հաշվային պլանին: Կարևորը՝ հաշվի անվանման բովանդակությունը ճիշտ լինի, և հաշվային պլանի ընդհանուր կառուցվածքին համապատասխան լինի:

Կարող են օգտագործվել երկրորդ կարգի հաշիվները (ենթահաշիվները):

1. 2024թ շենքի ամբողջական մաշվածքի հաշվարկ:

   Հունվար-Փետրվար՝ 0,233մլն
   Մարտ-դեկտեմբեր վերագնահատված արժեքով՝ (86-25) *0.025/12*10=1,271
   Նոր շենքի մաշվածքը՝ (37324,6-1,3246)*0.05/12*9=1,35
   Ընդամենը՝ 0,233+1,271+1,35=2,854

Վարչական ծախս՝ 2854000Х10%=285400

Իրացման ծախս՝ 2854000Х80%=2283200

Արտադրական ծախս կամ ինքնարժեք՝2854000Х10%=285400

2.

Դտ 713	«Վարչական ծախսեր»	
		285400 դրամ
Կտ 112	«Հիմնական միջոցների մաշվածություն»	

(0,5 միավոր)

Դտ 712	«Իրացման ծախսեր»	
		2283200դրամ
Կտ 112	«Հիմնական միջոցների մաշվածություն»	

(0.5 միավոր)

Դտ 711 կամ 811	«Ինքնարժեք»	285400դրամ
Կտ 112	«Հիմնական միջոցների մաշվածություն»	

(0.5 միավոր)

3. Շենքի վերագնահատման հաշվապահական ձևակերպումներ:
   Մեթոդ 1:
   Առ 01.03.24թ շենքի հաշվեկշռային արժեքի որոշում՝
   Մաշվածքը ՝ (81-25)*0,025/12*2=0.233մլն
   Հաշվեկշռային արժեք ՝ 73,2-0.233=72,967 ,կուտակված մաշվածքը ՝8,033
   Վերագնահատման գործակիցը կլինի՝ 86/72,967 =1.1786
   Շենքի սկզբնական արժեքը կդառնա՝ 81*1.1786=95,467
   Կուտակված մաշվածքը՝ 8,033*1.1786=9,467

Դտ 111	«Հիմնական միջոց շենքեր»	14467000 դրամ
Կտ 112	«Հիմնական միջոցների մաշվածություն»	1434000 դրամ
Կտ 321	«Վերագնահատումից արժեքի աճ»	13033000 դրամ

կամ

Մեթոդ 2:

Դտ 112	«Հիմնական միջոցների մաշվածություն»	8033000 դրամ
Կտ 111	«Հիմնական միջոց շենքեր»	8033000 դրամ
Դտ 111	«Հիմնական միջոց շենքեր»	13033000դրամ
Կտ 321	«Վերագնահատումից արժեքի աճ»	13033000 դրամ

(2 միավոր)

Տրվում է 2 միավոր մեթոդներից որևէ մեկը կամ երկուսն էլ ճիշտ ներկայացնելիս:

4. Սարքի մաշվածքի հաշվարկ՝ 26,900,000*0,02=5,380,000

Դտ 711 Կամ 811	«Ինքնարժեք»	5380000 դրամ
Կտ 112	«Հիմնական միջոցների մաշվածություն»	

(0,5 միավոր)

5. Տրանսպորտային միջոցի օտարման ձևակերպում

Դտ 721	«Հիմնական միջոցի օտարման ծախսեր»	11000000 դրամ
Դտ 112	«Տրանսպորտային միջոցի մաշվածք»	4000000 դրամ
Կտ 111	«Հիմնական միջոց՝ տրանսպորտ »	15000000 դրամ

(0,5 միավոր)

Դտ 221	«Դեբիտորական պարտքեր հիմնական միջոց գծով »	12000000 դրամ

Կտ 621	«Ոչ ընթ ակտիվների վաճառքից եկամուտ»	10000000 դրամ
Կտ 524	«Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով»	2000000 դրամ

(1 միավոր)

6. Նախորդ տարուց առկա ոչ նյութական ակտիվի մաշվածք՝ 5600000*0.01=560,000

Դտ 713	«Վարչական ծախսեր»	560000 դրամ
Կտ 132	«Ոչ նյութական ակտիվների մաշվածություն»	

(0,5 միավոր)

7. Կայքի ձեռք բերման ճշգտում Կայքի ձեռք բերման գործարքի ճշգրտում և մաշվածքի հաշվարկ՝ 2000000*0,2/12*11=366666

Դտ 713	«Վարչական ծախսեր»	860000 դրամ
Կտ 131	«Ոչ նյութական ակտիվներ»	

(0,5 միավոր)

Դտ 713	«Վարչական ծախսեր»	366666 դրամ
Կտ 132	«Ոչ նյութական ակտիվների մաշվածություն»	

(0,5 միավոր)

Ոչ նյութական ակտիվը 31.12.2024թ ֆին. արդյունքում կլինի՝ 8060,0-560,-860,0-366,666=6273

8**.**

Դտ 521	«Առևտրային կրեդիտորական պարտքեր»	5000000 դրամ
Կտ 211	«Պաշարներ»	

(0,5 միավոր)

9.

Դտ 714	«Գործառնական այլ ծախսեր»	
		9000000 դրամ
Կտ 211	«Պաշարներ»	

(0,5 միավոր)

10.

Դտ 714	«Գործառնական այլ ծախսեր»	
		1000000 դրամ
Կտ 218	«Պաշարների արժեքի նվազում»	

(0,5 միավոր)

11. 2025թ որոշում է ,որի հաշվապահական ձևակերպումները չեն ազդում 2024թ ֆինանսական հաշվետվության վրա: **(0,5 միավոր)**

12. Տարեվերջին դեբիտորական պարքտի մնացորդի ՝ 18960000*2%=379200

Դտ 714	« Գործառնական այլ ծախսեր »	
		379200 դրամ
Կտ 223	«Դեբ պարտքերի գծ. հնարավոր կորուստի պահուստաֆոնդ»	

(0.5 միավոր)

13

Նախորդ տարիների չբաշխված շահույթի ճշգրտումը

	Սկզբն մն.	**57675000**
	Դեբետային շրջ	Կրեդիտային շրջ
	285400	10000000
	2283200	
	285400	
	5380000	
	11000000	
	560000	
	860000	
	366666	
	9000000	
	1000000	
	379200	
	5000000	
	12000000	
Ընդամենը շրջ.	**48399866**	**10000000**
	մնացորդ	**19275134**

(3 միավոր)

14 . Չկրած տոկոսային ծախսերի հաշվարկ,վճարում և հաշվեգրում՝ 80,000,000 դրամ x 5%+ 1000000 դրամ:

Դտ 516	«Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»	5000000 դրամ
Կտ 511	«Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումար»	

(0,5 միավոր)

Դտ 727	«Ֆինանսական ծախսեր»	5000000դրամ
Կտ 516	«Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով»	

(0.5 միավոր)

Դտ 511	«Կարճաժամկետ վարկերի գծով վճարվելիք համախառն գումար»	4000000դրամ
Կտ 252	«Բանկային հաշիվ»	

(0.5 միավոր)

Այս հարցի համար սխալ պատասխան չի համարվի, եթե պատասխանում չի օգտագործվել 516 «Չկրած տոկոսային ծախսեր կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշիվը: Մասնավորապես տրվել է Դտ 727 – Կտ 511 հաշվապահական ձևակերպումը:

15.

Դտ 521	«Կրեդիտորական գնումների գծով»	պարտքեր	5000000դրամ
Կտ 221	«Դեբիտորական վաճառքից»	պարտքեր	

(0.5 միավոր)

16.

Դտ 751	« Շահութահարկի գծով ծախս »	12000000 դրամ
Կտ 524	«Կրեդիտորական պարտք բյուջեի գծով »	

(0.5 միավոր)

Դտ 343	«Հաշվետու տարվա շահույթ»	
		12000000 դրամ
Կտ 751	«Շահութահարկի գծով ծախս »	

(0.5 միավոր)

17**.** Քանի որ օժանդակ հաշիվը կիրառվել է զուտ հաշվեկշռման նպատակով,ճշգրտումներից հետո նրա կիրառությունը հանվում է:

(0.5 միավոր)

«Տոտալ» ընկ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեբերի 2024թ. հզ. Դրամ

	Ծանոթագրություն	2024 (ստորագրված)	2023 (ստորագրված)	
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ		104899	113300	
Այդ թվում՝				
Շենք,շինություն	1,2,3	83379	73200	3,5միավ
Արտադրական սարքավորումներ	4	21520	26900	0,5միավ
Տրանսպորտային միջոցներ	5	0	13200	1,5միավ
Ոչ նյութական ակտիվներ	6,7	6273	5200	1,0միավ
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		111172	118500	
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ / 23400-5000-9000-1000=8400	8,9,10	8400	23400	1,5միավ
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով /6960+12000-5000-379=13581	12,15	13581	8500	0,5միավ
Տրված կանխավճարներ		11100	0	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ /54525-4000=50525		50525	44525	0,5
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		83606	76425	
ՀԱՇՎԵԿՇԻՌ		194778	194925	
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ				
Սեփական միջոցներ				
Բաժնետիրական կապիտալ		50	50	
Չբաշխված շահույթ	13	19275	60675	3 միավ
Սեփական կապիտալի այլ տարրեր	3	13033	0	0,5միավ

Ընդամենը սեփական միջոցներ		32358	60725	
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	8	80000	40000	0,5 միավ
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		80000	40000	
Ընթացիկ պարտավորություններ				
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	14	9500	8500	0,5միավ
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով /18500-5000-5000=8500	8,15	8500	22500	0,5միավ
Ստացված կանխավճարներ		24000	8000	
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով /14000+12000+2000=28000	16	28000	45000	1միավ
Կրեդիտորական պարտք աշխատավարձի գծով		1500	9500	
Այլ ընթացիկ պարտավորություններ		920	0	
Պարտքեր շահաբաժինների գծով		10000	0	
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		82420	90500	
Ընդամենը պարտավորություններ		162420	133500	
Հաշվեկշիռ		194778	194225	
Ընդամենը միավորներ				15

11 րդ և 17 րդ կետերի գնահատում 1 միավոր

Ընդամենը (16 միավոր)

Խնդիր 1 –ի՝ բաժին Բ)

Բացահայտման պահանջները ՝ համաձայն ՀՀՄՍ 38-ի .

- ոչ նյութական ակտիվների յուրաքանչյուր դասերին, առանձնացնելով ներստեղծված և այլ ոչ նյութական ակտիվները:
- Ստանդարտը պահանջում է բացահայտել, թե արդյոք օգտակար ծառայության ժամկետը անորոշ է թե որոշակի և, եթե որոշակի է՝ բացահայտել օգտակար ծառայության ժամկետները կամ ամորտիզացիայի դրույքաչափերը և օգտագործվող ամորտիզացիայի մեթոդները:
- Անհրաժեշտ է ներկայացնել աղյուսակ, որը ցույց կտա ոչ նյութական ակտիվների յուրաքանչյուր դասի սկզբնական արժեքը կամ վերագնահատված արժեքը և ամորտիզացիան:
- Սահմանված են անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվների վերաբերյալ բացահայտման պահանջներ:
- Եթե ոչ նյութական ակտիվները վերագնահատվում են, պահանջվում է բացահայտել ոչ նյութական ակտիվների յուրաքանչյուր դասի հաշվեկշռային արժեքը, որոշված՝ սկզբնական արժեքի մոդելով:
- կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների համար էական նշանակություն ունեցող ցանկացած առանձին ոչ նյութական ակտիվի նկարագրությունը, հաշվեկշռային արժեքը և ամորտիզացիայի մնացած ժամանակաշրջանը.
- այն ոչ նյութական ակտիվների առկայությունը և հաշվեկշռային արժեքները, որոնց նկատմամբ սեփականության իրավունքը սահմանափակված է, և այն ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները, որոնք գրավադրվել են որպես երաշխիք՝ պարտավորությունների համար.
- ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար պայմանագրային հանձնառությունների գումարը:
- պետական շնորհի միջոցով ձեռք բերված և սկզբնապես իրական արժեքով ճանաչված ոչ նյութական ակտիվների համար ՝
  - այդ ակտիվների համար սկզբնապես ճանաչված իրական արժեքը.
  -դրանց հաշվեկշռային արժեքը.
  - ակտիվների ճանաչմանը հաջորդող չափման եղանակը՝ սկզբնական արժեքի մոտեցման կամ վերագնահատման մոտեցման համաձայն.

(Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը 1 միավոր, առավելագույնը 6 միավոր)

(6 միավոր)

Խնդիր 2. Բաժին Ա Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար (անուղղակի մեթոդ)		
1. Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	հազ.դրամ	միավ.
Զուտ շահույթ մինչև հարկումը 2750+494	3244	1
Ճշգրտումներ.		
Մաշվածություն 2000+1750 (15000*20%/12*7)	3750	1
Ոչ նյութական ակտիվի մաշվածք 5000+17000-21750	250	1
Ֆինանսական (տոկոսային) ծախսեր	500	0.5
Գործառնական դրամական միջոցների հոսքեր նախքան շրջանառու կապիտալում փոփոխությունները.	**7744**	
Պաշարների աճ 6900-8250	-1350	0.5
Դեբիտորական պարտքերի նվազում 8700-5120	3580	0.5
Կրեդիտորական պարտքերի նվազում 4400-4850	-450	0.5
Ստացված կանխավճարների աճ 13920-1000	12920	0.5
Գործառնական գործառնություններից ստացված դրամական միջոցներ	**22444**	
Վճարված տոկոսավճարներ 2500-2508-500	-508	0.5
Վճարված շահաբաժիններ 2000-3100-500	-1600	0.5
Վճարված շահութահարկ 1150-1192-494	-536	0.5
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ արտահոսք	**19800**	
2. Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների գնում	-15000	0.5
Ոչ նյութական ակտիվների գնում	-17000	0.5
Ներդրումային գործուն. դրամական միջոցների զուտ արտահոսք	**-12200**	
3. Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետոմսերի թողարկումից մուտքեր 18000-8000	10000	0.5
Երկարաժամկետ վարկերից մուտք 15000-14300	700	0.5
Ֆինանսավորման գործուն. դրամական միջոցների զուտ ներհոսք	**10700**	
Դրամական միջոցների զուտ արտահոսք	**-1500**	
Դրամական միջոցներ առ 2023թ. դեկտեմբերի 31-ը	3250	0.5
Դրամական միջոցներ առ 2024թ. դեկտեմբերի 31-ը	1750	0.5
Ընդամենը միավորներ		10

Հոդվածների անվանումները դիտարկել բովանդակային իմաստով:

Խնդիր 2 Բաժին Բ

Ցուցանիշներ	**2023**	**2024**	**միավոր**
կրեդիտորական պարտքերի շրջապտույտի միջին տևողությունը	4850/49707*365 =35.61	4400/61505*365 =26.11	**1**
սեփական կապիտալի շահութաբերության գործակիցները	1104/17900*100% =6.16% Կամ 0.0616	2750/30150*100% =9.12% Կամ 0.0912	**1**
ընթացիկ իրացվելիության գործակիցները	18550/12650 =1.4664	15120/23970= 0.6307	**1**
արագ իրացվելիության գործակիցները	(18850-6900)/12650 = 0.9446	(15120-8250)/23970 = 0.2866	**1**
պաշարների շրջապտույտի տևողությունը՝	6900/49707*365 =50.66	8250/61505*365 =48.95	**1**

Խնդիր 3:

Համաձայն ՀՀՄՍ 2 -ի ֆինանսական հաշվետվություններում պետք է բացահայտել հետևյալ տեղեկատվություն

ա) պաշարների չափման համար ընդունված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ներառյալ օգտագործված ինքնարժեքի բանաձևը	1 միավոր
բ) պաշարների ընդհանուր հաշվեկշռային արժեքը և ըստ կազմակերպությունում ընդունված դասակարգման՝ պաշարների հաշվեկշռային արժեքը,	1 միավոր
գ) պաշարների հաշվեկշռային արժեքը՝ հաշվառված իրական արժեքով՝ հանած վաճառքի ծախսումները,	1 միավոր
դ) ժամանակաշրջանի ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների գումարը,	1 միավոր
ե) ՀՀՄՍ 2 –ի 34-րդ պարագրաֆի համաձայն՝ ժամանակաշրջանի ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների ցանկացած իջեցված գումար,	1 միավոր
զ)ցանկացած իջեցման ցանկացած հակադարձված գումար, որը ճանաչվում որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում տվյալ ժամանակաշրջանում՝ համաձայն 34-րդ պարագրաֆի,	1 միավոր
է)այն հանգամանքները կամ դեպքերը, որոնք բերել են պաշարների իջեցման հակադարձման՝ համաձայն 34-րդ պարագրաֆի, և	1 միավոր
ը) որպես պարտավորությունների երաշխիք գրավադրված պաշարների հաշվեկշռային արժեքը:	1 միավոր

Ընդամենը (8 միավոր)

Խնդիր 4

Խոշոր և Միջին ընկերությունների համախմբված ֆինանսական վիճակի հաշվետվությունը առ 30.04.2025թ.

	Հազ.դր	միավոր
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Գուդվիլ (հաշվարկ 1)	141	1
Հիմնական միջոցներ (4400+700)	5100	0,25
Ներդրումներ ՝ բացառվում է դուստրի մասով	200	0,25
Ոչ նյութական ակտիվներ (2000+400)	2400	0,25
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	7841	
Ընթացիկ ակտիվներ		
Դրամական միջոցներ (1450+250)	1700	0,25
Դեբիտորական պարտքեր (3850+890-150)	4590	0,5
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	6290	
Ընդամենը ակտիվներ	*14131*	
Կապիտալ	2500	0,5
Չբաշխված շահույթ (հաշվարկ 2)	1467	1
Չվերահսկվող բաժնեմաս (հաշվարկ 3)	354	0.5
Ընդամենը կապիտալ	4321	
Ոչ ընթացիկ պարտավորություններ (6400+555)	6955	0,25
Կրեդիտորական պարտքեր (2500+505-150)	2855	0,25
Ընդամենը պարտավորություններ	9810	
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	*14131*	

Ընդամենը (5 միավոր)

Հաշվարկ 1 Գուդվիլ

	Հազ.դրամ	միավոր
Գուդվիլը ձեռք բերման ամսաթվին 1000-((960+200)*70%)	188	0.5
Գուդվիլի արժեզրկում 188*25%	(47)	0.5
Գուդվիլը համախմբված Ֆին.վիճակի մասին հաշվ. 188-47	141	

Հաշվարկ 2 Չբաշխված շահույթ

	Հազ.դրամ	միավոր
ընկերության չբաշխված շահույթը 1500	1500	0.25

Հետձեռքբերումային շահույթի բաժնեմաս (220-200)* 70%	14	0.25
Գուդվիլի արժեզրկում	(47)	0.25
Չբաշխված շահույթ	1467	0.25

Հաշվարկ 3 Չհսկվող բաժնեմաս

	Հազ.դրամ	միավոր
Չվերահսկվող բաժնեմաս ձեռք բերման պահին՝ 348, գումարած հետձեռքբերումային շահույթի ՉԲ՝ 20*0,3 = 6 ՉԲ = 348+6=354	354	0.5